# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N 19 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 711-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու մասին» N 711-Ն որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. հունվարի 23
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 19 -ի N 19 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 26 -ի N 711 - Ն որոշման

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

| Մննդամթերքի անվանումը | Չափի միավորը | Մեկ մարդու համար, օրական (զտաքաշ) | |
|---|---|---|---|
| | | երեխաների | մեծահասակների |
| **1. Հաց և հացամթերք** | | | |
| Ցորենի հաց | գրամ | 450 | 500 |
| Ցորենի ալյուր | գրամ | 10 | 10 |
| Կարտոֆիլի ալյուր | գրամ | 8 | 5 |
| Մակարոնեղեն | գրամ | 30 | 40 |
| Ձավարեղեն, ընդեղեն | գրամ | 70 | 80 |
| Չորահաց (սուխարի) | գրամ | 2 | 6 |
| **2. Կարտոֆիլ** | | | |
| Կարտոֆիլ | գրամ | 300 | 300 |
| **3. Բանջարաբոստանային մշակաբույսեր** | | | |
| Բանջարեղեն | գրամ | 400 | 400 |
| **4. Մրգեր, հատապտուղներ, ընկուզազգիներ և խաղող** | | | |
| Թարմ մրգեր | գրամ | 200 | 250 |

| | | | |
|---|---|---|---|
| Չորացրած մրգեր | գրամ | 20 | 25 |
| **5. Շաքար և հրուշակեղեն** | | | |
| Շաքար, մուրաբա, ջեմ, մեղր, հրուշակեղեն | գրամ | 70 | 70 |
| **6. Կաթ և կաթնամթերք** | | | |
| Կաթնաշոռ | գրամ | 60 | 35 |
| Կաթ | գրամ | 200 | 200 |
| Մածուն, կեֆիր | գրամ | 200 | 200 |
| Թթվասեր | գրամ | 30 | 30 |
| Պանիր | գրամ | 10 | 15 |
| **7. Միս և մսամթերք** | | | |
| Միս | գրամ | 120 | 125 |
| Թռչնամիս | գրամ | 30 | 30 |
| **8. Ձուկ և ձկնամթերք** | | | |
| Ձուկ, ծովամթերք | գրամ | 30 | 42 |
| **9. Ձու** | | | |
| Ձու | հատ | 2 (շաբաթական) | 2 (շաբաթական) |
| **10. Կարագ և բուսական յուղեր** | | | |
| Կարագ | գրամ | 30 | 30 |
| Բուսական յուղ | գրամ | 25 | 30 |
| **11. Ոչ ալկոհոլային խմիչքներ** | | | |
| Կակաո, սուրճ | գրամ | 3 | 2 |
| Թեյ | գրամ | 1 | 2 |
| Մրգային հյութեր | մլ | 200 | 200 |
| **12. Այլ մթերք** | | | |
| Տոմատի մածուկ | գրամ | 5 | 5 |
| Խմորիչ | գրամ | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| Աղ՝ յոդացված | գրամ | 5 | 5 |
| Համեմունք | գրամ | 1 | 1 |
| Մասուր | գրամ | 20 | 20 |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ